

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 29.12.2017 թ. թիվ 1106 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ
ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ
Կ Ա Ր Գ

Ընդունված է Համալսարանի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 9 28.12.2017թ.
Առ 10.05.2018թ. փոփոխություններով և լրացումներով
Առ 09.07.2019թ. փոփոխություններով և լրացումներով

Վանաձոր
2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի ձեռքբերումների ու աշխատանքների (այսուհետ՝ աշխատանքների) համար դրամական խրախուսման հաշվարկման և վճարման չափանիշները, չափերը և պայմանները:

2. Համալսարանի աշխատողներին սույն կարգով նախատեսված դեպքերում դրամական խրախուսում վճարվում է միայն սույն կարգով նախատեսված գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային աշխատանքների համար:

3. Յուրաքանչյուր կետով նախատեսված աշխատանքի համար վճարում կատարվում է մեկ անգամ: Մի քանի կետերի համապատասխանող միևնույն աշխատանքի համար հեղինակին վճարվում է գումարի առավելագույն չափ սահմանող կետով:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Համալսարանի աշխատողներին գիտահետազոտական որոշ տեսակի աշխատանքների իրականացման համար տրվում են դրամական խրախուսումներ՝ համաձայն Աղյուսակ 1-ի: Խրախուսում տրվում է գրախոսվող ամսագրերում և/կամ ժողովածուներում տպագրված հոդվածների համար:

Աղյուսակ 1.

Հ/Հ	Գիտահետազոտական գործունեության նկարագիրը	Աշխատանքի համար սահմանված պայմանական միավոր	Ծանոթություն
1.	Հոդվածի տպագրում «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում	150	
2.	Հոդվածի տպագրում արտասահմանյան գիտական հանդեսներում (պարբերականի համարանիշ (ISSN) ունեցող), Բազմավեպ, Հանդես Ամսօրեայ, Բագին	40	
3.	Հոդվածի տպագրում ՀՀ ԲՈՒԿ-ի կողմից երաշխավորված գիտական պարբերականներում, «ՎՊՀ գիտական տեղեկագրում»	20	
4.	Հոդվածի տպագրում հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում	20	
5.	Հոդվածի տպագրում միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում	30	
6.	Թեզիսի տպագրում միջազգային գիտաժողովում	15	
7.	Մենագրության հրատարակում (երկու մասնագիտական գրախոսության և գիտական հիմնարկի գիտխորհրդի երաշխավորության առկայության դեպքում)	Մեկ տպագրական մամուլը՝ 30	
8.	Վերջին երկու տարում Համալսարանում աշխատող և 36 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանություն	200	Գումարը վճարվում է ատենախոսություն պաշտպանած աշխատողին ԲՈՂ-ում

			հաստատվելուց հետո
9.	Թեկնածուական ատենախոսության պաշտպանություն	100	Գումարը վճարվում է ատենախոսություն պաշտպանած աշխատողին ԲՈՂ-ում հաստատվելուց հետո
10.	Դոկտորական ատենախոսության պաշտպանություն	300	Գումարը վճարվում է ատենախոսություն պաշտպանած աշխատողին ԲՈՂ-ում հաստատվելուց հետո
11.	Պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար	150	Գումարը վճարվում է պրոֆեսորի կոչում ստացած աշխատողին ԲՈՂ-ում հաստատվելուց հետո
12.	Դոցենտի գիտական կոչում ստանալու համար	50	Գումարը վճարվում է դոցենտի կոչում ստացած աշխատողին ԲՈՂ-ում հաստատվելուց հետո
13.	Վերջին երկու տարում Համալսարանում աշխատող հայցորդի (ասպիրանտի) պաշտպանած ատենախոսության ղեկավարում	150	Գումարը վճարվում է հայցորդի (ասպիրանտի) Համալսարանում աշխատող ղեկավարին ԲՈՂ-ում հաստատվելուց հետո

5. Գիտական աշխատանքի համահեղինակության դեպքում խրախուսման համար նախատեսված գումարը հավասարապես բաժանվում է համահեղինակների միջև կամ համահեղինակների կողմից համատեղ ներկայացված տեղեկանքի հիման վրա, որտեղ նշված է գիտական աշխատանքի ստեղծմանը նրանց մասնակցության չափը տոկոսներով: Յուրաքանչյուր հեղինակի համար հաշվարկված գումարը որոշելուց հետո Համալսարանի աշխատողին վճարվում է իր մասնակցությանը համապատասխանող չափով գումար:

6. Աղյուսակ 1-ում սահմանված աշխատանքների կատարման համար Համալսարանի աշխատողին վճարվող դրամական խրախուսման տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 800 միավորին համապատասխանող գումարը:

7. Աղյուսակ 1-ի կետերով սահմանված աշխատանքների դիմաց դրամական խրախուսման արժանանալու համար Համալսարանի աշխատողը գիտական աշխատանքը հրատարակելուց, գիտական աստիճան կամ կոչում ստանալուց հետո դիմում է ներկայացնում ռեկտորին: Դիմումին, ըստ անհրաժեշտության, կցվում են աշխատանքի բնօրինակը կամ առանձնատիպը կամ կայքէջի ամբողջական հասցեն, վկայականը, սեղմագիրը, որոնք 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվելուց հետո վերադարձվում են հեղինակ(ներ)ին: Դիմումով մեկից ավելի աշխատանքներ ներկայացնելու դեպքում կցվում է նաև այդ աշխատանքների ցուցակը՝ ըստ հավելված 1-ի: Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի դրական եզրակացության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հրաման, իսկ դրամական խրախուսումը ենթակա է վճարման 7 աշխատանքային օրվա ընթացքում:

III. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Համալսարանի աշխատողներին ուսումնամեթոդական որոշ տեսակի աշխատանքների իրականացման համար տրվում են դրամական խրախուսումներ՝ համաձայն Աղյուսակ 2-ի.

Աղյուսակ 2.

Հ/Հ	Ուսումնամեթոդական գործունեության նկարագիրը	Աշխատանքի համար սահմանված պայմանական միավոր	Ծանոթություն
1.	ԿԳՆ կողմից երաշխավորված բուհական դասագրքի հրատարակում	1 տպագրական մամուլը՝ 14	
2.	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակում	ԿԳՆ կողմից երաշխավորված՝ 1 տպագրական մամուլը՝ 10, գիտական հիմնարկի գիտխորհրդի կողմից երաշխավորված՝ 1 տպագրական մամուլը՝ 8	
3.	Համալսարանում օտարալեզու կրթական մոդուլի ներդրում	1 կրեդիտին համապատասխանող միավորների քանակը՝ 30	Գումարի և կրեդիտների արտադրյալը բաժանվում է (համա)հեղինակների թվին
4.	ՈՒԳԸ-ի գիտական հոդվածների ժողովածուում տպագրված աշխատանքների ղեկավարում (եթե այն կուրսային կամ ավարտական աշխատանքի մաս չէ)	Մեկ աշխատանքը՝ 5	

9. Ուսումնամեթոդական աշխատանքի համահեղինակության (համադեկլավարության) դեպքում խրախուսման համար նախատեսված գումարը հավասար բաժանվում է համահեղինակների (համադեկլավարների) միջև կամ համահեղինակների (համադեկլավարների) կողմից համատեղ ներկայացված տեղեկանքի հիման վրա, որտեղ նշված է գիտական աշխատանքի ստեղծմանը նրանց մասնակցության չափը տոկոսներով: Յուրաքանչյուր հեղինակի (ղեկավարի) համար հաշվարկված գումարը որոշելուց հետո Համալսարանի աշխատողին վճարվում է իր մասնակցությանը համապատասխանող չափով գումար:

10. Աղյուսակ 2-ի կետերով սահմանված աշխատանքների դիմաց դրամական խրախուսման արժանանալու համար Համալսարանի աշխատողը գիտական աշխատանքը հրատարակելուց, աղյուսակում նշված յուրաքանչյուր սյունակի աշխատանքի ավարտից հետո դիմում է ներկայացնում ռեկտորին: Դիմումին, ըստ անհրաժեշտության, կցվում են աշխատանքի բնօրինակը կամ առանձնատիպը, որոնք 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվելուց հետո վերադարձվում են դիմումատու(ներ)ին: Համալսարանի համապատասխան պրոռեկտորի դրական եզրակացության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հրաման, իսկ դրամական խրախուսումը ենթակա է վճարման 7 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Աղյուսակ 2-ում սահմանված աշխատանքների կատարման համար Համալսարանի աշխատողին վճարվող դրամական խրախուսման տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 400 միավորին համապատասխանող գումարը:

**IV. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ
ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

12. Համալսարանի աշխատողներին կազմակերպական որոշ տեսակի աշխատանքների իրականացման համար տրվում են դրամական խրախուսումներ՝ համաձայն Աղյուսակ 3-ի.

Աղյուսակ 3.

Հ/Հ	Աշխատանքի տեսակը	Աշխատանքի համար սահմանված պայմանական միավոր*
1.	Համալսարանում ներբուհական գիտաժողով կազմակերպելու համար	60
2.	Համալսարանում միջբուհական գիտաժողով կազմակերպելու համար	100
3.	Համալսարանում միջազգային գիտաժողով կազմակերպելու համար	200
4.	Համալսարանում աշակերտական օլիմպիադաների կազմակերպում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիադայի համար 50 միավոր գումարած յուրաքանչյուր մասնակցի համար 0,5 միավոր (բնագիտամաթեմատիկական առարկաների օլիմպիադաներին՝ առնվազն 20, հումանիտար առարկաների օլիմպիադաներին առնվազն 40 մասնակցից աշակերտների դեպքում)
5.	Համալսարանում միջբուհական (առնվազն 3 բուհի ուսանողների մասնակցության դեպքում) ուսանողական օլիմպիադաների կազմակերպում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիադայի համար 70 միավոր գումարած յուրաքանչյուր մասնակցի համար ավելացում՝ 0,7 միավոր
6.	Միջազգային և հանրապետական առարկայական ուսանողական օլիմպիադաներին, միջբուհական փառատոներին, մրցույթներին (սպորտային, գեղանկարչական, երաժշտական և այլ) Համալսարանի ուսանող(ներ)ի // թիմ(եր)ի // համույթ(ներ)ի նախապատրաստում՝ մրցանակային տեղ շահելու դեպքում	Մեկ առարկայից՝ Խմբի համար՝ 150 Անհատի համար՝ 50
7.	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների մասնակցություն	Խմբի յուրաքանչյուր անդամին յուրաքանչյուր այցի համար 3 միավոր

13. Աղյուսակ 3-ում սահմանված աշխատանքների կատարման համար վճարվող գումարը, Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի զեկուցագրի համաձայն, համամասնորեն բաժանվում է՝ 1-5 կետերի դեպքում՝ կազմակերպիչների, 6-րդ կետի դեպքում՝ ղեկավարների, իսկ 7-րդ կետի դեպքում՝ մասնակիցների թվին:

14. Յուրաքանչյուր կազմակերպչի, ղեկավարի կամ մասնակցի համար հաշվարկված գումարը որոշելուց հետո Համալսարանի աշխատողին վճարվում է իր մասնակցությանը համապատասխանող չափով գումար:

15. Աղյուսակ 3-ում սահմանված աշխատանքների կատարման համար Համալսարանի աշխատողին վճարվող դրամական խրախուսման տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 200 միավորին համապատասխանող գումարը:

V. ԱՐՎԵՍԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Համալսարանի աշխատողներին արվեստի և սպորտի բնագավառներում ձեռք բերած հաջողությունների համար տրվում են դրամական խրախուսումներ՝ համաձայն Աղյուսակ 4-ի.

Աղյուսակ 4

Հ/Հ	Ձեռք բերած հաջողության նկարագիրը	Աշխատանքի համար սահմանված պայմանական միավոր	Ծանոթություն
1.	Միջազգային մենահամերգ կամ մարզական մրցում (մրցանակային տեղ գրավելու դեպքում)	200	
2.	Հանրապետական մենահամերգ կամ մարզական մրցում (մրցանակային տեղ գրավելու դեպքում)	150	
3.	Քաղաքային մենահամերգ կամ մարզական մրցում (մրցանակային տեղ գրավելու դեպքում)	100	
4.	Մասնակցություն արտասահմանյան ցուցահանդեսի կամ համերգի	Յուրաքանչյուր նոր ստեղծագործության համար՝ 40 Կատարող(ներ)ին՝ 20	բայց ոչ ավելի, քան 2 աշխատանք
5.	Մասնակցություն հանրապետական ցուցահանդեսի կամ համերգի	Յուրաքանչյուր նոր ստեղծագործության համար՝ 20 Կատարող(ներ)ին՝ 20	բայց ոչ ավելի, քան 2 աշխատանք
6.	Մասնակցություն քաղաքային ցուցահանդեսի կամ համերգի	Յուրաքանչյուր նոր ստեղծագործության համար՝ 15 Կատարող(ներ)ին՝ 20	բայց ոչ ավելի, քան 2 աշխատանք

17. Աղյուսակ 4-ի կետերով սահմանված հաջողությունների դիմաց դրամական խրախուսման արժանանալու համար Համալսարանի աշխատողը միջացառման ավարտից հետո դիմում է ներկայացնում ռեկտորին: Դիմումին, ըստ անհրաժեշտության, կցվում են աֆիշը, բուկլետը, արձանագրությունը, որոնք 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվելուց հետո վերադարձվում են հեղինակ(ներ)ին: Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի դրական եզրակացության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հրաման, իսկ դրամական խրախուսումը ենթակա է վճարման 7 աշխատանքային օրվա ընթացքում:

17.1. Սույն կարգի 7-րդ, 10-րդ և 17-րդ կետերում սահմանված դեպքերում Համալսարանի համապատասխան պրոռեկտորի բացասական եզրակացության կամ տեսակետների տարբերության դեպքում հարցին անդրադառնում է Համալսարանի գիտլորհրդի առաջարկով ստեղծված հանձնաժողովը՝ կազմված երեք անձից: Հանձնաժողովը հավաստում է բացասական եզրակացությունը կամ հանդես է գալիս նոր առաջարկությամբ:

18. Աղյուսակ 4-ում սահմանված ձեռքբերումների համար Համալսարանի աշխատողին վճարվող դրամական խրախուսման տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 800 միավորին համապատասխանող գումարը:

VI. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

19. Աղյուսակներում սահմանված պայմանական 1 միավորի չափը յուրաքանչյուր տարի Համալսարանի ռեկտորին առընթեր ֆինանսատնտեսական հանձնաժողովի առաջարկությամբ սահմանվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

20. Դրամական խրախուսումների չափերը չեն ներառում եկամտից վճարվող հարկերը և նպատակային սոցիալական այլ վճարները:

21. Սույն կարգով նախատեսված դրամական խրախուսումներ տրվում են 2017թ. հունվարի 1-ից հետո իրականացված աշխատանքների համար:

22. Մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը ներհամալսարանական իրավական ակտերի հիման վրա վարձատրված և/կամ կամ խրախուսված անձինք նույն աշխատանքի համար սույն կարգի պայմաններով այլևս չեն խրախուսվում:

23. Մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը ներհամալսարանական իրավական ակտերի հիման վրա 2017 թվականի ընթացքում խրախուսված անձանց դրամական խրախուսման չափը սույն կարգով նախատեսված չափից պակաս լինելու դեպքում տվյալ աշխատողի զեկուցագրի հիման վրա տրվում է դրամական խրախուսում՝ տարբերության գումարի չափով:

24. Սույն կարգի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Համալսարանի գիտական խորհրդի կողմից 17.07.2006թ. ընդունված «Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական աշխատակիցների կողմից գրված մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, անհատական ցուցահանդեսների, սպորտային նվաճումների համար խրախուսման կարգը»:

Հավելված 1

N/o	Աշխատանքի անվանումը	Տեսակը (հոդված, մենագրություն, դասագիրք, ուսումնական ձեռնարկ և այլն)	Գրականության աղբյուրը (հրատ. վայր, տարեթիվ, համար, էջեր)	Համահեղինակ (ներ)
1.				
2.				
3.				

Հեղինակ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Աղյուսակներում օգտագործված հապավումների ցանկ

- ԿԳՆ - Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն
- ԲՈՀ - Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողով
- ՈԻԳԸ - ուսանողական գիտական ընկերություն